ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՔՈՅԱՆ ՏԱՐՈՆ ԱՐԱՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1991-2015 ԹԹ.

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ, Լ. Ս. Հովսեփյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Հ. Մելքոնյան

պ.գ.թ. Դ. Ս. Ափինյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. դեկտեմբերի 28-ին, ժ. 14:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճում)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2022 թ. նոյեմբերի 17-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 2016 և 2020 թթ. արցախյան պատերազմները, տարածաշրջանում ընթացող անվտանգային զարգացումները, ռուս-թուրքական հարաբերություններում տեղ գտած փոխակերպումները և երկու երկրների միջև ռազմաքաղաքական համագործակցային նոր միտումները ևս մեկ անգամ կարևորեցին Հայաստանի անվտանգային մարտահրավերների ու սպառնալիքների վերագնահատումը: Ակնհայտ են նաև հարավկովկասյան տարածաշրջանում ռուս-թուրքական հարաբերությունների միաժամանակյա հակամարտահամագործակցային ընդհանուր տրամաբանության որոշակի փոխակերպումները՝ ճգնաժամային իրավիճակներում երկուստեք շահերի ապահովման ճկուն մեխանիզմների կիրարկման տեսանկյունից: Հետսառըպատերազմյան շրջանում Ռուսաստանի Դաշնությունը եղել է հետխորհրդային տարածքի և մասնավորապես Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ենթահամալիրի[1] գերակայող տերություն, քանի որ նրա գերիշխանական (հեգեմոն) դերը մշտապես վիճարկվել է տարբեր ուժային կենտրոնների ներթափանցումների միջոցով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի Հանրապետությունը ակտիվորեն սկսեց վիճարկել ՌԴ-ի գերիշխանական հավակնությունները՝ փորձելով դիրքավորվել որպես այդ տարածաշրջանի նոր նախագերիշխան, որը դրսևորվեց Երևանի և Մոսկվայի դեմ թշնամական և պանթյուրքական հռետորաբանությամբ ու ակտիվ տնտեսական, ռազմաքաղաքական ներթափանցմամբ, սակայն Թուրքիայի հավակնությունները կյանքի չկոչվեցին: Ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում Հայաստանի գործոնայնությունը դրսևորվել է Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ենթահամալիրում ուժային ու աշխարհաքաղաքական հավասարակշռության պահպանման, մասնավորապես՝ Ռուսաստանի համար գերակայող տերության կարգավիճակի երաշխավորման գործում: Թուրքիան Հարավային Կովկաս ներթափանցմամբ մշտապես փորձել է ի հաշիվ Ռուսաստանի գերակայության տարածաշրջանային անվտանգության կարգում դիրքավորվել որպես ռուսական գերակայությունը վիճարկող առանցքային դերակատար՝ ձգտելով ապահովել իր նախագերիշխանական նկրտումները: Հայաստանը բացառիկ դերակատարություն է ունեցել տարածաշրջանային անվտանգության կարգում Թուրքիայի հավակնությունների սահմանափակման և Ռուսաստանի գերակայող կարգավիճակի երկարատև

[1] Տեսական շրջանակի մասին տե՛ս Buzan B. and Wæver O., Regions and Powers. The Structure of International Security, New York, Cambridge University Press, 2003:

պահպանման հարցում: 2020 թ. ղարաբաղյան պատերազմն ու դրա հետևանքներն արդեն նոր սրությամբ ու որակական փոփոխություններով օրակարգ բերեցին ՌԴ-ի տարածաշրջանային անխախտ գերակայության վիճարկելիության հարցը, քանի որ Թուրքիայի ուղղակի, բացահայտ ներգրավվածությունը պատերազմում աննախադեպ էր հետխորհրդային տարածքում թուրքական ռազմական ներգրավվածության առումով: Թեմայի արդիականությունը բխում է ռուս-թուրքական հարաբերությունների փոխակերպումների և հարավկովկասյան տարածաշրջանի վրա դրանց ազդեցության ու այդ համատեքստում Հայաստանի՝ որպես գործոնի դերի ու նշանակության վերհանման ու գնահատման անհրաժեշտությունից: Հայաստանի գործոնը Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում դիտարկվում է տարածաշրջանային անվտանգության համալիրի վերլուծական շրջանակում և հետխորհրդային համալիրում մրցակցող տերությունների մրցապայքարի համատեքստում: Թուրքիայի համար Հայաստանի գործոնայնությունը դիտվել է որպես հետխորհրդային տարածաշրջանային անվտանգության համալիրում՝ մասնավորապես հարավկովկասյան ենթահամալիրում իր աշխարհաքաղաքական հավակնությունները սահմանափակող, իսկ Ռուսաստանի համար՝ որպես իր գերակա դիրքն ապահովող գործոն: 1991-2015 թթ. Հարավային Կովկասում Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքականությունում տեղ են գտել, և՛ հակամարտային, և՛ համագործակցային փուլեր ու գործընթացներ՝ նաև դրանց համաժամանակյա զուգակցմամբ, որում Հայաստանի գործոնայնության աստիճանը տարբեր դրսևորումներ է ունեցել:

Ատենախոսության օբյեկտը և առարկան

Ատենախոսության օբյեկտը ռուս-թուրքական հարաբերություններն են, իսկ առարկան՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում դրանց զարգացումն ու փոխակերպումները և դրանց ամբողջության համատեքստում Հայաստանի գործոնի դերն ու նշանակությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է վերհանել Հայաստանի գործոնի դերն ու նշանակությունը Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում: Այդ կապակցությամբ ձևակերպվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Ցույց տալ ռուս-թուրքական հարաբերություններում Հայաստանի գործոնի դրսևորման շրջափուլերի ընթացքը.
2. Ներկայացնել Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների հետխորհրդային զարգացումների բնույթը և դրանում Հայաստանի գործոնի դերը.
3. Վերլուծել Հարավային Կովկասում իր գերիշխանության պահպանմանն ուղղված Ռուսաստանի գործողությունները, սեփական դիրքերի

ամրապնդմանն ուղղված Թուրքիայի նախաձեռնությունները, նրանց շահերը շոշափած տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումները և դրանցում Հայաստանի գործոնայնության նշանակությունը.

4. Վերհանել Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում տարածաշրջանային անվտանգության կարգում և ռազմաքաղաքական հավասարակշռությունում Հայաստանի գործոնի դերը.

5. Ներկայացնել սիրիական և ուկրաինական զարգացումների համատեքստում ռուս-թուրքական հարաբերություններում գրանցված փոփոխությունները և գնահատել դրանց ազդեցությունը Հայաստանի և Հարավային Կովկասի անվտանգային դինամիկայի վրա:

Ատենախոսության գիտական նորույթը

Թեև ռուս-թուրքական հարաբերություններին ու դրանց տարբեր ասպեկտներին նվիրված հետազոտությունների պակաս չկա, այնուամենայնիվ, այդ հարաբերություններում Հայաստանի գործոնայնության խնդրի ուսումնասիրությունները սուղ են և ոչ ամբողջական, և սույն աշխատանքը կոչված է հնարավորինս ամբողջական և համապարփակ կերպով ներկայացնելու հիմնախնդիրը: Մասնավորապես, ռուս-թուրքական հարաբերությունները հիմնովին վերլուծվում են դրանցում Հայաստանի գործոնի, դրա նշանակության ու փոխակերպումների տեսանկյունից: Ներկայացվել են ռուս-թուրքական հարաբերությունների մրցակցային և համագործակցային փուլերը, դրանց միջև անցումային ընթացքը, շարժառիթներն ու կողմերի հարաբերությունները պայմանավորող տարաբնույթ գործոնները: Այս համատեքստում վերլուծվել, գնահատվել է Հայաստանի գործոնի նշանակությունն ու դրա փոխակերպումները ռուս-թուրքական միաժամանակ և՛ հակամարտային, և՛ համագործակցային հարաբերությունների նոր միտումների շրջանակում: Ատենախոսը մի շարք արխիվային փաստաթղթերի, փաստագրական նյութի և գիտական հետազոտությունների հիման վրա փորձել է համակողմանի վերլուծությամբ նորովի մեկնաբանել ուսումնասիրվող հիմնախնդիրը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության համար մեթոդաբանական հիմք են ծառայել պատմահամեմատական, պատմաքննական վերլուծության մեթոդները: Ուսումնասիրության առարկա հանդիսացող մի շարք խնդիրներ հետազոտվել են փաստերի, օգտագործված աղբյուրների և նյութերի հնարավորինս անաչառ համադրմամբ՝ ենթարկվելով բովանդակային վերլուծության:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1991-2015 թթ.: ԽՍՀՄ-ի փլուզմամբ ռուս-թուրքական հարաբերություններում կրկին ի հայտ եկավ Հայաստանի գործոնայնությունը: Աշխատանքն

ավարտվում է 2015 թ. սկիզբ առած ռուս-թուրքական ճգնաժամի և Հարավային Կովկասի վրա դրա ազդեցության վերլուծությամբ, քանի որ հետճգնաժամային գործընթացները կերպափոխեցին երկկողմ հարաբերությունների բնույթը, ինչը, կարծում ենք, առանձին ուսումնասիրության թեմա է: Սակայն, այս համատեքստում, աշխատանքում կատարված վերլուծական դիտարկումներում և եզրակացություններում որոշակի անդրադարձ է կատարվել նաև 2016 և 2020 թթ. ղարաբաղյան պատերազմներին: Ծավալային առումով ունենալով սահմանափակումներ՝ հատուկ անդրադարձ չի կատարվել 1918-20 թթ. և 1921 թ. ընթացքում ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում հայկական գործոնի նշանակությանն ու զուգահեռների անցկացմանը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսությունն ունի նաև գործնական-կիրառական նշանակություն: Ներկայացված փաստերը, դրանց շուրջ մեկնաբանությունները, դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել Թուրքիայի և Ռուսաստանի՝ մերձավորարևելյան և հարավկովկասյան խնդիրների, ռուս-թուրքական հարաբերությունների, այդ թվում՝ Հայաստանի շահերի, տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրություններում: Ատենախոսության դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել պատմաբանների, քաղաքագետների, արևելագետների, ռուս-թուրքական հարաբերությունների խնդիրներով զբաղվող մասնագետների համար, ռազմաուսումնական հաստատություններում և հատուկ դասընթացներում կարող է օգտագործվել որպես ուսումնական նյութ:

Աշխատանքի փորձաքննությունը

Ատենախոսության հիմնական դրույթները, քննարկվող հարցերին առնչվող հիմնախնդիրներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում, ներկայացվել միջազգային գիտաժողովներում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն[2]

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն և անգլերեն լեզվով տարաբնույթ աղբյուրների և գրականության հիման վրա: Օգտագործվել են Հայաստանի Ազգային արխիվի, ՀՀ ԱԳՆ-ի Պատմադիվանագիտական բաժնի որոշ նյութեր, պաշտոնական աղբյուրներ, հարցազրույցներ, հայաստանյան և միջազգային մամուլ, միջազգային պայմանագրեր, համաձայնագրեր, հռչակագրեր, թեմատիկային առնչվող մենագրություններ, հոդվածներ և վերլուծական հրապարակումներ:

[2] Ծավալային սահմանափակության պատճառով սեղմագրում այս ենթաբաժինը ներկայացված է համառոտ: Ավելի մանրամասն տե՛ս ատենախոսության մեջ:

Արժեքավոր աղբյուր են հանդիսացել նաև «SIPRI» և «Կովկաս» ինստիտուտների տարեգրքերը, «Նորավանք» ԳԿՀ-ի[3], «Carnegie»[4] և «Chatham House», «Brookings», «Stratfor», թուրքական «ASAM», «21. Yüzıl Türkiye enstitüsü», «Stratejik Arastırmalar Merkezi» ուղեղային կենտրոնների հրապարակումներն ու վերլուծությունները: Ուսումնասիրության համար օգտագործվել են նաև թուրքական Milliyet, Hürriyet, Zaman, Yeni Şafak, Yeni Ğağ պարբերականներն ու թերթերը:

Աշխատանքում ռուս-թուրքական հարաբերությունների հաստատման և զարգացման ընթացքի լուսաբանման համար սկզբնաղբյուր են ծառայել կողմերի միջև կնքված առանցքային փաստաթղթերը[5]: Մատնանշվել է կողմերի հարաբերություններում տարածաշրջանային և արտատարածաշրջանային տարաբնույթ գործոնները, գնահատվել դրանց ազդեցության աստիճանը: Ներկայացվել են ռուս-ադրբեջանական[6], թուրք-ադրբեջանական[7], հայ-ռուսական[8] հիմնարար փաստաթղթերը և հայ-

---

[3] Տեղեկատվական անվտանգություն, **«Նորավանք» ԳԿՀ**, Եր., 2017:

[4] В ожидании бури: Южный Кавказ, под. ред. Макиенко К. В., **МЦ Карнеги**, М., 2018.

[5] Договор об основах отношений РФ и ТР, 1992г., http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-361/48617,
Turkey's Political Relations With Russian Federation, 2001, http://www.mfa.gov.tr/turkey_s-political-relations-with-russian-federation.en.mfa,
Совместная декларация об углублении дружбы и многопланового партнерства между Российской Федерацией и Турецкой Республикой, МИД РФ, 2004г., http://www.mid.ru/ru/maps/tr/-/asset_publisher/Fn23Klb76LY2/content/id/453582,
Совместная декларация о продвижении к новому этапу отношений между Российской Федерацией и Турецкой Республикой и дальнейшем углублении дружбы и многопланового партнерства, сайт: Президент России, 2009г., http://kremlin.ru/supplement/172,

[6] Договор о дружбе, сотрудничестве и взаимной безопасности между РФ и АР, 1997 г., http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=3994&fbclid=IwAR1gO4POkTRME1X9NsqX-ulsslm9gkAVI4fbbH-ahDV6j02h_86Dq8l8yhg,
Декларация о дружбе и страдегическом партнёрстве между АР и РФ, 2008 г., http://kremlin.ru/supplement/250

[7] Обнародован текст военного соглашения между Азербайджаном и Турцией, 2010г., https://regnum.ru/news/polit/1359151.html.

[8] Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между РФ и РА, 1997г., http://docs.cntd.ru/document/8306454,
Армения и Россия подписали договор о размещении военной базы в Гюмри, 1992, 1995, 2010 гг., https://eurasia.expert/armeniya-i-rossiya-podpisali-dogovor-o-voennoy-baze,
ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը և ՌԴ Նախագահ Վլ. Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ, 2013թ., https://www.president.am/hy/press-

թուրքական արձանագրությունները[9], որոնք այս կամ այն կերպ առնչվել են Հայաստանի շահերին:

Աշխատանքում օգտագործել ենք հայ պատմաբաններ, քաղաքագետներ, փորձագետներ Վ. Բայբուրդյանի[10], Ռ. Սաֆրաստյանի[11], Հ. Դեմոյանի[12], Ն. Հովհաննիսյանի[13], Վ. Տեր-Մաթևոսյանի[14], Զարևանդի[15], Լ. Հովսեփյանի[16], Ս. Գրիգորյանի[17], Գ. Արշակյանի[18], Է. Դավթյանի[19], Հ.

---

release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/?fbclid=IwAR38U04u53BZX62WOqPcSbrJkzNTAskTdJLJsp2uE_7eaccw-CPMu6kF9VA

ՀՀ և ՌԴ միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագիր, 2015թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115436

[9] «ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին», 2009 թ., https://www.azatutyun.am/a/1812299.html:

[10] **Բայբուրդյան Վ. Ա.,** Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011: Իրան-Ադրբեջան. հարևանություն թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ // ՀՀ ԳԱԱ ԱԻ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի XXII հատոր, Եր., 2003, էջ 7-38:

[11] **Սաֆրաստյան Ռ. Ա.,** Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. Աշխարհառազմավարական զինադադա՞ր // «21-ՐԴ ԴԱՐ», թիվ 4 (10), Եր., 2005, էջ 34-46: Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Եր., 2019: Թուրքիայի Հանրապետության պատմություն, Եր., 2014: Турция по-прежнему представляет военную угрозу Армении, 13.08.2019, https://novostink.net/politics/267353-turciya-po-prezhnemu-predstavlyaet-voennuyu-ugrozu-armenii.html?fbclid=IwAR2F8Z9DT6_wHuiDyBu-SXwHtkUalFS83TrhIdGw2_02Y2RmSaVgcDY6YFA և այլն:

[12] **Демоян Г. А.,** Внешняя политика Турции и Карабахский конфликт. Историко-сравнительный анализ, Ер., 2013.

[13] **Հովհաննիսյան Ն. Հ.,** Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ (պատմաբան-միջազգայնագետի դիտարկումներ), Եր., 2020: **Հովհաննիսյան Ն.,** Գևորգյան Գ., «Արաբական գարուն». համաարաբական ըմբոստությունը հանուն արաբական հասարակության արդիականացման, Եր., 2018:

[14] **Տեր-Մաթևոսյան Վ. Հ.,** Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում, «21-րդ ԴԱՐ», Թիվ 1 (65), 2016, էջ 33-57: **Ter-Matevosyan V.,** Deadlocked in history and geopolitics: Revisiting Armenia–Turkey relations, Digest of Middle East Studies, Vol. 30, No. 3, 2021, pp. 156-169. Grigoryan A., Khachatryan K., **Ter-Matevosyan V.,** Armenia-Turkey border opening: what determines the attitude of Armenians? Caucasus Survey, Vol. 7, Issue 1, 2019, pp. 25-43.

[15] **Зареванд**, Турция и пантуранизм / введ. А. Н. Мандельштама. М., 2015.

[16] **Հովսեփյան Լ. Ս.,** Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության

Քոթանջյանի[20], Բ. Պողոսյանի[21], Թ. Հակոբյանի[22] և այլոց աշխատություններն ու հրապարակումները:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանն ու Հայաստանն ի դեմս Թուրքիայի համապատասխանաբար տեսնում էին որպես հակառակորդ-մրցակցի ու սպառնալիքի: Մասնավորապես, ըստ Ս. Մարկեդոնովի՝ 90-ականներին Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների ձևավորման վրա զգալի դեր խաղաց Թուրքիայի գործոնը: Թուրքագետ Վ. Տեր-Մաթևոսյանը նշել է՝ ղարաբաղյան հարցում Թուրքիայի ծայրահեղ դիրքորոշումն ու Հայաստանի նկատմամբ նրանից հնչող սպառնալից հռետորաբանությունը զսպվում էր Ռուսաստանի հնարավոր միջամտության հեռանկարով: Ն. Հովհաննիսյանը նշել է, որ Ռուսաստանի համար աշխարհաքաղաքական-ստրատեգիական գործոն դարձավ Հայաստանը, իսկ վրացական և ադրբեջանական գործոնների լիարժեք օգտագործումը Ռուսաստանի մոտ չէր ստացվում: Է. Դավթյանն իրավացիորեն գտնում է, որ Ադրբեջանը եռակողմ ձևաչափն օգտագործել է ընդդեմ Հայաստանի՝ փորձելով ներկայացնել դա որպես ղարաբաղյան խնդրում Ադրբեջանի հետ Թուրքիայի և Վրաստանի կողմից «համերաշխության դրսևորում»: Քաղաքագետ Հ. Քոթանջյանը նշել է՝ Հայաստանը համարում է, որ վրաց-թուրքական, վրաց-ադրբեջանական տնտեսական, տրանսպորտային,

---

մարտահրավերները // «Հայկական բանակ», 4 (98) 2018, էջ 33-48: **Овсепян Л.,** Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Е., 2010.

[17] **Գրիգորյան Ս. Մ.,** Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Եր., 2016: Իսլամական արմատականությունը Կովկասում (ծայրահեղ արմատական դրսևորումներն ու ներկա միտումները), Եր., 2017:

[18] **Արշակյան Գ. Մ.,** Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Եր., 2009: Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: Ուսումնական ձեռնարկ, Եր., 2015: **Արշակյան Գ.,** Եղիազարյան Ա., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Եր., 2014 և այլն:

[19] **Давтян Э.,** Трехстороннее военное сотрудничество Турции, Грузии и Азербайджана (ноябрь 2012 г. – май 2016 г.) // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Եր., 2016, № 3 (21), էջ 37-44.

[20] **Քոթանջյան Հ. Ս.,** Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., 2008:

[21] **Պողոսյան Բ. Պ.,** Ռուս-թուրքական ճգնաժամը հետաձգվում է. ինչու է այն կարևոր Երևանի համար, 06.03.2020, https://www.civilnet.am/news/2020/03/06/Ռուս-թուրքական-ճգնաժամը-հետաձգվում-է-ինչու-է-այն-կարևոր-Երևանի-համար/377768

[22] **Հակոբյան Թ. Ա.,** Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Եր., 2012: Կանաչ ու սև: Արցախյան օրագիր, 3-րդ հրատ., Եր., 2011:

ռազմական ծրագրերի ծավալման միտումները հղի են հարավկովկասյան տարածաշրջանում հավասարակշռության խախտման հնարավոր վտանգով՝ կապված Հայաստանի մեկուսացման հետ: Եռակողմ այդ համագործակցության կապակցությամբ Լ. Հովսեփյանն ու Վ. Իվանովն արձանագրել են՝ աշխարհաքաղաքական գործընթացների տեսանկյունից թուրք-վրացական և թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը թուրքական կողմը դիտարկում էր տարածաշրջանում Ռուսաստանին, Իրանին և զարգացող հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը հավասարակշռելու քայլերի շրջանակում: Ռ. Սաֆրաստյանի համոզմամբ՝ Թուրքիան կձգտի կրճատել Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասում: 20-րդ դարի 90-ական թթ. առումով Ռ. Սաֆրաստյանը նշել է, որ ղարաբաղյան հակամարտության զինված փուլի՝ հայկական կողմի հաղթանակով ավարտվելու հանգամանքը, ինչպես նաև Ռուսաստանի ցուցաբերած վճռականությունը զգալիորեն նպաստեցին Հարավային Կովկասում ի հաշիվ Ռուսաստանի Թուրքիայի դիրքերի ուժեղացման գործընթացի կասեցմանը, իսկ ռուս-թուրքական հարաբերությունների 2000-ականներին վերաբերող փուլը՝ իրավացիորեն որակել որպես «աշխարհառազմավարական զինադադար»:

1991-2015 թթ. ընթացքում ռուս-թուրքական հարաբերությունների և դրանցում Հայաստանի գործոնի մասով օգտագործել ենք մի շարք ռուս հետազոտողների աշխատություններ: Մասնավորապես՝ Վ. Ավատկովի[23], Ս. Մարկեդոնովի[24], Ե. Պրիմակովի[25], Ա. Վասիլևի[26], Ա. Ֆեդորչենկոյի[27], Ա.

---

[23] **Аватков В. А.,** Турция: поворот на Восток // Контуры глобальных трансформаций: политика, экономика, право. Том 10, ном. 2, М., 2017, с. 181-196. **Дружиловский С. Б**., **Аватков В. А.,** Россия и Турция в новом тысячелетии // Российско-турецкие отношения: 2002-2012 годы, М., 2013, с. 11-20. Турция подталкивает Азербайджан к войне с Арменией – российский востоковед, 22.07.2020, https://eadaily.com/ru/news/2020/07/22/turciya-podtalkivaet-azerbaydzhan-k-voyne-s-armeniey-rossiyskiyvostokoved?fbclid=IwAR3UuyilG3J7CWBrkJzTgoGqIw92k779mEca28u2xVwqSgr8EYDzhTN5OwY.

[24] **Маркедонов С. М.,** Тридцать лет нагорно-карабахского конфликта: основные этапы и перспективы урегулирования // Постсоветские исследования, Т. 1, ном. 2, 2018, с. 129-138. Армяно-российский договор: двадцать лет спустя, 29.08.2017 թ., http://politcom.ru/22719.html и т. д.

[25] **Примаков Е. М.,** Мир без России? К чему ведет политическая близорукость, М., 2016. Россия. Надежды и тревоги, М., 2016. Встречи на перекрестках, М., 2017. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами, М., 2018.

[26] **Васильев А. М.,** От Ленина до Путина. Россия на Ближнем и Среднем Востоке, М., 2018.

[27] **Федорченко А. В.,** Россия-Турция: преодолевая экономические и политические противоречия // Российско-турецкие отношения: 2002-2012 годы, М., 2013, с. 143-148.

Արեշևի[28], Ա. Մալաշենկոյի[29], Ա. Դուգինի[30], Ա. Օրլովի[31], Ն. Ուլչենկոյի և Պ. Շլիկովի[32] աշխատանքներն անդրադառնում են Ռուսաստանի արտաքին ու անվտանգային քաղաքականության, ռուս-թուրքական հարաբերությունների տարբեր ասպեկտներին ու խնդիրներին, հարավկովկասյան տարածաշրջանում երկու տերությունների շահերին: Հետազոտողների մի մասը ռուս-թուրքական հարաբերությունները ներկայացնում է առավելապես համագործակցային, մի մասն էլ՝ մրցակցային, հակամարտային միտումների ու հեռանկարների լույսի ներքո: Մասնավորապես, թուրքագետ Վ. Ավատկովի կարծիքով՝ Հարավային Կովկասի ապակայունացմամբ Թուրքիան ձգտում է ամրապնդել իր ազդեցությունը, ինչին առավելապես խոչընդոտում է Ռուսաստանը, որը կատարում է կառուցողական դեր՝ փորձելով թույլ չտալ բախումներ և հիշելով Հայաստանի առջև իր դաշնակցային պարտավորությունների մասին: Վերջինս գտնում է, որ ռուս-թուրքական մրցակցությունը տարածաշրջանային գործընթացներում շարունակվում է: Մինչդեռ, կարծում ենք, որ հատկապես ՌԴ-Արևմուտք լարված հարաբերությունների պայմաններում, Մոսկվան շահագրգիռ է Թուրքիայի հետ գործընկերային հարաբերություններում՝ պատրաստ լինելով զիջումների իր դաշնակիցների և մասամբ նաև իր շահերի հաշվին: Իսկ Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ում, խուսանավում է Ռուսաստան-Արևմուտք հակասությունների միջև: Ա. Դուգինը գտնում է, որ Թուրքիան, ռուսական եվրասիականության գաղափարի շրջանակներում, կարող է դառնալ Ռուսաստանի առանցքային գործընկերը, ուստի հարաբերությունները պետք է կառուցվեն համատեղ շահերի հատման ու սպասարկման վրա: Ուշագրավ է Ա. Մարկեդոնովի դիտարկումը, որ ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացումը Հայաստանի համար ավելի շատ բացասական, քան դրական տարբերակ է, նման պարագայում Մոսկվան կզրկվի Թուրքիայի և Ադրբեջանի վրա լծակներից: Մինչդեռ, կարծում ենք, որ ռուս-թուրքական սերտ հարաբերություններն առավել ռիսկային են Հայաստանի համար: Թուրքիա-

---

[28] **Арешев А. Г.,** Армянская государственность перед внутренними и внешними вызовами, CAUCASICA, Труды Института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, Том 1 / Под ред. В. А. Захарова, М., 2011, с. 283-291.

[29] **Малашенко А. В.,** Россия и конфликты на Южном Кавказе в 2011 г. // КАВКАЗ-2011, Е., 2013, с. 146-157.

[30] **Дугин А. Г.,** Основы геополитики. Геополитическое будущее России // Геополитика: Антология, М., 2006, с. 881-895.

[31] **Орлов А. А.,** Российско-турецкие отношения: трудное движение вперед // Российско-турецкие отношения: 2002-2012 годы, М., 2013, с. 7-10.

[32] **Ульченко Н. О., Шлыков П. В.,** Динамика российско-турецких отношений в условиях нарастания глобальной нестабильности / под ред. В. В. Наумкина, М., 2014.

Արևմուտք հարաբերությունների բարելավմամբ Հայաստանն առանձնակի կկարևորվի Ռուսաստանի կողմից:

Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք նաև թուրք հետազոտողներ Մ. Այդընի[33], Բ. Արասի[34], Շ. Աքթյուրքի[35], Ֆ. Ա. Քելքիթլիի[36], Դ. Ն. Գյոքսելի[37], Օ. Ունլուհիսարջիքլիի[38], Մ. Չելիքփալայի[39], Ու. Ջեռահի[40], Ի. Բալի[41], Օ. Քոջամանի[42], Զ. Օղուզի[43], Մ. Սայինի ու Մ. Դողանի[44] և այլոց, իսկ

---

[33] **Aydin M.,** Turkey's Caucasus Policies // UNISCI Discussion Papers, No. 23 (May 2010), pp. 177-191. Turkish Policy Toward the Caucasus // Connections, The Quarterly Journal, Vol. 1, No. 3 (September 02), pp. 39-47. KAFKASYA'DA TÜRK DIŞ VE GÜVENLİK POLİTİKALARININ DEĞİŞEN DİNAMİKLERİ, Kafkasya'da Değişim Dönüşüm, 1989-2012 (Avrasya Üçlemesi III) (Der. M. Aydin), Ankara, Nobel Akademik Yayincilik, 2012.

[34] **Aras B.,** Turkey's Policy toward the South Caucasus Expectations, Failures and Achievements, in "The New Geopolitics of the South Caucasus: Prospects for Regional Cooperation and Conflict Resolution", ed. Shireen T. Hunter, London: Lexignton Books, 2017, pp. 175-195. **Арас Б.,** Турция и Южный Кавказ в 2008 г. // КАВКАЗ-2008, Е., 2010, с. 168-180.

[35] **Aktürk Ş.,** Turkish-Russian Relations after the Cold War (1992-2002) // Turkish Studies, Vol. 7, No. 3, September 2006, pp. 337-364.

[36] **Kelkitli F. A.,** Turkish-Russian relations: competition and cooperation in Eurasia, NY, 2017.

[37] **Goksel D. N.,** The dynamics of the Ankara-Moscow partnership in relation to the South Caucasus, published by the Strategic Research Center, August, 2012, pp. 1-11. Ermenistan ve Türkiye'nin iç siyaseti ilişkilerin gündemini belirliyor, 01.03.2014, https://repairfuture.net/index.php/tr/soyk-r-m-n-tuerkiye-den-bak-s/ermenistan-ve-turkiye-nin-ic-siyaseti-iliskilerin-gundemini-belirliyor-diba-nigar-goeksel.

[38] **Унлухисарджиклы О.,** Турция и Южный Кавказ в 2011 г. // КАВКАЗ-2011, Е., 2013, с. 163-172.

[39] **Çelikpala M.,** Turkey as a Regional Power and the Caucasus, Insight Turkey, 2007, Vol. 9, No. 2, pp. 25-30. Türkiye ve Kafkasya: Reaksiyoner Dış Politikadan Proaktif Ritmik Diplomasiye Geçiş, Uluslararası İlişkiler, Cilt 7, Sayı 25 (Bahar 2010), s. 93-126. **Çelikpala M.**, **Veliyev C.**, AZERBAIJAN-GEORGIA-TURKEY: An Example of a Successful Regional Cooperation, Policy Brief, CIES, 04, November 2015. **Челикпала М.,** Турция и Южный Кавказ в 2009 г. // КАВКАЗ-2009, Е., 2011, с. 172-190.

[40] **Cerrah U.,** GÜNEY KAFKASYA'DA GÜVENLİK BOYUTU, GÜNEY KAFKASYA'YA GÜNCEL BAKIŞ SEMPOZYUMU, Harp Akademileri Basım Evi. Yenilevent – İstanbul, 2006, s. 24-27.

[41] **Bal I.,** The Turkish Model and the Turkic Republics- Perceptions: Journal of International Affairs, Vol. 3, No. 3, September-November, 1998, pp. 105-129. Turkey's Relations with the West and the Turkic Republics: The Rise and Fall of the Turkish Model, UK, 2000. Turkish Foreign Policy in Post Cold War Era, **Ed. Idris Bal**, Universal-Publishers, 2004.

[42] **Коджаман О.,** Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004.

[43] **Oğuz C.,** Türkiye-Azerbaycan ilişkileri ve Ermenistan faktörü, Uluslararası İlişkiler Serisi - 3, Yeni Türkiye Yayıncılık, Ankara, 2010.

ադրբեջանցիներից՝ Օ. Աբդուլլաևի[45], Ռ. Մուսաբեկովի[46], Ա. Սերհատի[47], Ռ. Միրկադիրովի[48] Հ. Ջաբբարլլի[49] և այլոց աշխատանքներից: Վերոնշյալ աշխատանքներն անդրադառնում են մասնավորապես Հարավային Կովկասում Ռուսաստանի ու Թուրքիայի քաղաքականության, տարածաշրջանի ռազմաքաղաքական գործընթացների ու անվտանգային միջավայրի տարբեր հիմնախնդիրներին, որոնք օգտակար են թուրքական ու ադրբեջանական ակադեմիական քննարկումները հասկանալու և վերլուծելու տեսանկյունից: Արևելագետ Ա. Օրլովը և քաղաքագետ Դ. Ն. Գյոքսելը գտնում են, որ Հարավային Կովկասի ռազմաքաղաքական միջավայրը կախված է Մոսկվայի և Անկարայի միջև հարաբերություններից: Գյոքսելի կարծիքով՝ ռուս-թուրքական հարաբերությունները Հարավային Կովկասում կծավալվեն Արևմուտք-Ռուսաստան և Արևմուտք-Թուրքիա հարաբերությունների հիման վրա: Իսկ հետազոտողներ Զ. Վարհոլան և Է. Բեզջին նկատում են՝ ռուս-թուրքական գործընկերությունն ունի «պաշպանողական» բնույթ՝ պայմանավորված Ռուսաստան-Արևմուտք և Թուրքիա-Արևմուտք հարաբերությունների վատթարացմամբ: Ուստի, Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում որոշիչ է Արևմուտքից մերժված լինելը: Մ. Այդընի կարծիքով՝ «Սառը պատերազմ»-ից հետո Թուրքիան իր պատմական մրցակից Ռուսաստանից պաշտպանվելու համար սատարում էր կովկասյան նորաստեղծ պետությունների անկախությանը, կայունությանն ու տարածքային ամբողջականությանը: Սակայն, սույն պնդումը չի համընկնում 90-ական թթ. Թուրքիայի ծավալապաշտական ծրագրերի և սադրիչ հայտարարությունների հետ: Օրինակ, Դ. Ն. Գյոքսելը օբյեկտիվ է գտնվել իր տեսակետում՝ «Սառը պատերազմ»-ից հետո Թուրքիայից բխող պանթյուրքական հռետորաբանությունը Հարավային Կովկասի նկատմամբ ընկալվեց որպես մարտահրավեր թյուրքական սուբյեկտներով հարուստ Ռուսաստանի համար: Իսկ Զ. Բժեզինսկին նշել է՝ 1991-1992 թթ. հետխորհրդային տարածքում թյուրքախոս մի շարք պետությունների ի հայտ

---

[44] **Sayin F. M., Dogan M.,** Political relations between Turkey and Georgia in the post-soviet era // Journal of Liberty and International Affairs, Vol. 3, No. 2, 2017, pp. 42-54.

[45] **Абдуллаев О.,** Азербайджан-2009: основные тенденции общественно-политического и социально-экономического развития // КАВКАЗ-2009, Е., 2011, с. 9-28.

[46] **Мусабеков Р.,** Карабахский фактор во внешней и внутренней политике Азербайджана // Кавказское соседство: Турция и Южный Кавказ, Е., 2008, с. 84-100.

[47] **Серхат А. С.,** Азербайджан-Турция: особенности и характерные черты международных связей // Гілея науковий вісник, 2014, Вип. 85, с. 123-127.

[48] **Миркадыров Р.,** Азербайджан-2010 // КАВКАЗ-2010, Е., 2012, с. 16-33.

[49] **Cabbarlı H.,** Bağımsızlık Sonrası Ermenistan-Rusya İlişkileri, Asam Yayınları, Ankara, 2004, ss. 1-41.

գալը բնականորեն ենթադրում էին Թուրքիայի ակտիվացումը: Այս կապակցությամբ ուշագրավ է նաև Ռ. Սաֆրաստյանի դիտարկումը, որ էությամբ պանթուրքիստական իր նպատակները Թուրքիան քողարկում էր նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետություններում «թուրքական մոդելի» տարածման անհրաժեշտությամբ: Նույն ժամանակաշրջանի վերաբերյալ Ֆ. Ա. Քելքիթլին նշել է, որ Հարավային Կովկասը դարձավ Եվրասիայում թուրք-ռուսական մրցակցության առանցքը:

Բ. Արասի կարծիքով 2000-ական թթ. Հարավային Կովկասում Թուրքիայի առաջնահերթությունները սահմանափակվեցին տարածաշրջանում Ռուսաստանի ներկայությունը հավասարակշռելու և էներգետիկ-տնտեսական ոլորտում համագործակցության զարգացման նպատակների մեջ: Նրա կարծիքով՝ ղարաբաղյան հակամարտությունը Ռուսաստանն օգտագործել է թե՛ Հայաստանում, և թե՛ Ադրբեջանում իր ազդեցությունը պահպանելու համար: Աստիճանաբար Մոսկվան սկսեց կարևորել Ադրբեջանի և Թուրքիայի գործոնայնությունը:

Ռ. Մուսաբեկովը նշում է, որ Հայաստանին ճնշման և մեկուսացման ենթարկելը Ադրբեջանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից է, ինչը պետք է իրականացվի Ռուսաստանի և Իրանի չեզոքացմամբ ու խաղաղեցմամբ: Ուշագրավ է նաև Ռ. Միրկադիրովի այն համոզմունքը, որ Ռուսաստանը չունի անհրաժեշտ քաղաքական և տնտեսական ռեսուրսներ Հարավային Կովկասն իր ազդեցության տակ պահելու համար, ուստի պետք է «ազատ նավարկության» թողնի տարածաշրջանի պետություններին: «Ազատ նավարկություն» ասելով Միրկադիրովը, թերևս, ի նկատի է ունեցել այն պայմանները, որոնք կնպաստեն ՀՀ-ի թուրք-ադրբեջանական օկուպացմանը:

Կարևոր նյութ են ծառայել նաև արևմտյան գիտնականների, հետազոտողների և վերլուծաբանների՝ Հ. Քիսինջերի[50], Զ. Բժեզինսկու[51], Ս. Հանթինգթոնի[52], Թ. դե Վաալի[53], Զ. Ֆրիդմանի[54], Մ. Քրոյսանի[55], Զ.

---

[50] **Kissinger H.,** Does America Need a Foreign Policy? : toward a diplomacy for the 21st century, NY, 2001. Дипломатия, М., 1997. Мировой порядок, М., 2016.

[51] **Бжезинский Зб.,** Выбор. Мировое господство или глобальное лидерство, М., 2007. Еще один шанс. Три президента и кризис американской сверхдержавы, М., 2010. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, М., 2019.

[52] **Хантингтон С.,** Столкновение цивилизаций / Сер. «Эксклюзивная классика», М., 2018.

[53] **Vaal T. de,** Armenia and Turkey: Bridging the Gap, **Carnegie** Endowment for International Peace, October 2010. **Ваал Т. де,** Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, М., 2005.

[54] **Фридман Дж.,** Следующие 10 лет, М., 2011. Турции следует говорить с Арменией не о Карабахе, а о снижении роли России, 25.11.2010г., http://nv.am/turtsii-sleduet-govorit-s-armeniej-ne-o-karabahe-a-o-snizhenii-roli-rossii/.

Վարհոլայի[56], Պ. Բանի[57], Դ. Ֆիլիպսի[58], ինչպես նաև Ս. Բլանկի, Ու. Ջոնսենի, Ս. Փելեթերեի[59] և այլոց աշխատություններն ու հրապարակումները: Պ. Բանն ու Ք. Քիրիշչին նկատել են՝ Անկարան ողջունեց արաբական երկրներում սկսված ժողովրդական ընդվզումները, քանի որ, մերժված լինելով ԵՄ-ից, դրանք նրա համար «իսլամական աշխարհ»-ում առավելության հասնելու հնարավորություն էին: Ուշագրավ են Բժեզինսկու նաև հետևյալ տեսակետները (արտահայտված՝ 2017 թ.)՝ 10-15 տարի անց Ռուսաստանը կլինի իր խնդիրների մեջ մխրճված պետություն՝ առանց որևէ հետաքրքրության զբաղվելու արտաքին քաղաքական, առավել ևս՝ ինտեգրացիոն ծրագրերով Եվրասիայում… Տարածաշրջանում գերակայության հասնելու համար Մոսկվային պետք է Ադրբեջանը, և ոչ թե Հայաստանը: Ուստի Բաքվի հետ հարաբերությունները, Ադրբեջանի ինտեգրացիան ռուսական կառույցներ ու Ռուսաստանի դերի բարձրացումը Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ առավել կարևոր են Մոսկվայի համար պատժամիջոցների և միջազգային մեկուսացման պայմաններում, քան Հայաստանի գործոնը:…Ռուսական ռազմաբազան Թուրքիայից պաշտպանվելու համար չէ տեղակայված: Թուրքիայից Հայաստանի նկատմամբ վտանգ չկա, քանզի այն ամբողջությամբ վերահսկվել, վերահսկվում և վերահսկվելու է ԱՄՆ-ի կողմից: Եթե Զ. Բժեզինսկու նշված որոշ տեսակետներ արժե դիտարկել, ապա նրա այս վերջին պնդումը՝ զուրկ է միանշանակ լինելուց:

Ս. Բլանկը, Ու. Ջոնսենն ու Ս. Փելեթերեն նշել են՝ 1990-ական թթ. Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ռազմավարությունը կապված էր Արևմուտքի ռազմավարական շահերի հետ: Դրա հիմնական նպատակը տարածաշրջանում թուրքական ներգրավվածությամբ Ռուսաստանի և Իրանի դերի սահմանափակումն էր: Վերջիններիս միտքը լրացվում է Մ. Քրոյսանի կողմից՝ Հարավային Կովկասում ազդեցության համար մղվող պայքարում Թուրքիան և Ռուսաստանը ձգտում էին հաջողության հասնել միմյանց շահերի հաշվին: Այդ մրցակցությունն ազդեց

---

[55] **Croissant Michael P.,** The Armenia-Azerbaijan Conflict: Causes and Implications, 1998.

[56] **Warhola James W., Bezci Egemen B**., The Return of President Putin and Russian-Turkish Relations: Where Are They Headed? SAGE Open, July-September 2013.

[57] **Baev P., Kirişci K**., An ambiguous partnership: The serpentine trajectory of Turkish-Russian relations in the era of Erdoğan and Putin // The Center on the United States and Europe at Brookings - Turkey project policy paper, Number 13, September 2017.

[58] **Phillips David L.,** Diplomatic history: The Turkey-Armenia Protocols, Columbia University, NY, March 2012.

[59] **Blank Stephen J., Johnsen William T., Pelletiere Stephen C.,** Turkey's Strategic Position at the Crossroads of World Affairs, The Minerva Group, Inc., 2002.

ղարաբաղյան հակամարտության վրա: Հիշատակված տեսակետները կարող է եզրափակել Ֆ. Հիլլի և Օ. Թաշփինարի սույն տեսակետը՝ ԽՍՀՄ-ի փլուզմամբ Մոսկվայի դիրքերը թեև թուլացան, սակայն 90-ականն թթ. Թուրքիային չհաջողվեց դառնալ կովկասյան տարածաշրջանի տնտեսական և քաղաքական հեգեմոնը:

Թ. դե Վաալի կարծիքով՝ Ռուսաստանը սատարում է ԼՂ շուրջ բանակցային գործընթացի ոչ թափանցիկ և դանդաղ բնույթը՝ ստանալով միլիոններ կողմերին զենքի վաճառքից: Նրա ռազմավարությունն է՝ թույլ չտալ որպեսզի հակամարտությունը դուրս գա իր վերահսկողությունից, ջերմ հարաբերություններ պահպանել Բաքվի և Երևանի հետ: Իսկ Ա. Մալաշենկոն խնդրի վերաբերյալ նշել է՝ նույնիսկ, հաշվի առնելով ռուս-հայկական հարաբերությունների առանձնահատուկ բնույթը, Ռուսաստանը երբեք ամբողջությամբ չի կանգնի Հայաստանի կողքին: 2012 թ. Դ. Ֆիլիպսը նշել է՝ Ռուսաստանի կարճաժամկետ ռազմավարական շահերը սպասարկվում էին Թուրքիայի և Հայաստանի հետ լավ հարաբերություններով, որով Մոսկվան երկուսից էլ ստանում էր մարտավարական օգուտներ: Չնայած, Թուրքիան երկարաժամկետ ռազմավարական մրցակից էր, բայց նաև առավել մեծ գործընկեր էր:

Հիշատակության է արժանի «Stratfor»-ի ղեկավար Ջ. Ֆրիդմանի այն տեսակետը, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը կարող է հաջողել, եթե Հայաստանից դուրս բերվեն ռուսական զորքերը, հակառակ պարագայում այդ գործընթացը չի կարող նշանակություն ունենալ: Նրա համոզմամբ՝ Թուրքիան Հայաստանի հետ պետք է խոսի ոչ թե Լեռնային Ղարաբաղից, այլ այդ երկրում Ռուսաստանի դերի նվազեցումից: Հայաստանում ռուսական զորքերի ներկայությունը չի բխում Թուրքիայի շահերից: Նման պայմաններում Հայաստանի հետ սահմանի բացումը Թուրքիայի համար օգուտ չունի, փոխարենը նա կարող է վատացնել իր հարաբերություններն Ադրբեջանի հետ: Անկարային ուղղված Ֆրիդմանի խորհուրդներն առավելապես բխել են Հայաստանի գործոնի միջոցով Ռուսաստանի տարածաշրջանային դերի թուլացման արևմտյան ընկալումներից:

Թեև ակադեմիական-վերլուծական գրականությունը հարուստ է ռուս-թուրքական հարաբերությունների աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, տնտեսական ու անվտանգային ոլորտներում փոխհարաբերությունների ու հիմնախնդիրների բազմաշերտ ուսումնասիրություններով, այդուհանդերձ դրանցում բաց է մնացել Հայաստանի գործոնի նշանակության և կերպափոխումների համակողմանի վերլուծությունը հատկապես 90-ականն թթ. հետո: Ուստի, կարևոր է Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների դիտարկումը Հայաստանի

գործոնայնության, նրա դերի ու նշանակության կերպափոխումների վերհանման համատեքստում, ինչը որոշ չափով կլրացնի առկա բացը:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանվել են ութ ենթագլուխների, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային A4 շարվածքի 170 էջ:

Ներածությունում խոսվում է թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվել է աշխատանքի կիրառական նշանակությունը, ինչպես նաև տրվել՝ օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Ռուս-թուրքական հարաբերությունները 1990-ական թվականներին: Հավասարակշռման մեկնարկը փոխադարձ անվստահության ու հակասությունների պայմաններում», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայաստանը 20-րդ դարի 90-ական թվականների ռուս-թուրքական տուրբուլենտ հարաբերություններում» ներկայացված են ԽՍՀՄ-ի փլուզմամբ Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի թուլացման ֆոնին տարածաշրջանի նկատմամբ Թուրքիայի նկրտումները, դրանց ձևաչափային փոխակերպումները ու Հայաստանի նշանակությունը:

Երկրորդ՝ «Ղարաբաղյան պատերազմը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում. հավասարակշռման մեկնարկը» վերտառությամբ ենթագլխում վերհանվել է ղարաբաղյան պատերազմի նշանակությունը Ռուսաստանի և Թուրքիայի համար, որը դարձավ նոր աշխարհաքաղաքական իրավիճակում Հարավային Կովկասում ռուս-թուրքական ուժային հավասարակշռման գործոնն ու երկարատև ռազմաքաղաքական հակակշռման մեկնակետը:

Երկրորդ գլուխը՝ «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման փոխակերպվող միտումներում» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ռուս-թուրքական հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնները Հարավային Կովկասում. մրցակցությունից համագործակցություն» ներկայացված են 2000-ականներին ռուս-թուրքական հարաբերությունների բազմաշերտ զարգացումը, դրանք պայմանավորող հիմնական գործոնները, որով համագործակցությունը բարձրացվեց ռազմավարական գործընկերության մակարդակի՝ մրցակցության ու համագործակցության ճկուն համադրությամբ: Այդ

պայմաններում ևս Հարավային Կովկասը շարունակեց կողմերի համար առանցքային հանդիսանալ: Սակայն, Թուրքիայի ակնկալիքները չկայացան: Այն է՝ Ռուսաստանի հետ սերտ համագործակցությամբ ղարաբաղյան խնդրի ադրբեջանանպաստ լուծում և ողջ տարածաշրջանի նկատմամբ ռուս-թուրքական համատեղ ազդեցության սահմանում: Մոսկվան շարունակեց պահպանել իր միանձնյա դերը տարածաշրջանում, ինչը սկսեց գրգռել Անկարային:

Երկրորդ ենթագլխում՝ «2008 թ. օգոստոսյան պատերազմի ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա. Անկարայի նոր մոտեցման սաղմնավորումը» ներկայացվում և վերլուծվում են 2008 թ. ռուս-վրացական պատերազմի և դրան հաջորդած իրադարձություններում Մոսկվայի քայլերի նկատմամբ Թուրքիայի հավասարակշռված և կառուցողական դիրքորոշումն ու դրանց շարժառիթները, պատերազմի ազդեցությունը ինչպես երկկողմ հարաբերությունների կերպափոխման, տարածաշրջանում Ռուսաստանի հետ հարաբերվելու Թուրքիայի ռազմավարական նոր մոտեցման արմատավորման, այնպես էլ՝ հարավկովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական գործընթացների վրա:

Երրորդ ենթագլխում՝ «Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում» ներկայացված են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Ռուսաստանի և Թուրքիայի շարժառիթներն ու ակնկալիքները՝ կարգավորման գործընթացը դիտարկելով ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում: Մասնավորապես, Անկարան շարունանում էր հույս ունենալ, որ Մոսկվայի հետ սերտ համագործակցությամբ կկարողանա վերջինիս հետ կիսել տարածաշրջանը տնօրինելու հանձնառությունը: Սակայն, այդ շրջանում Ռուսաստանը մերժեց թուրքական այդ մոտեցումը: Դա արտահայտվեց նաև Անկարայի կողմից ղարաբաղյան խնդիրը հիշյալ կարգավորման օրակարգ մտցնելու փորձերի հարցում:

Երրորդ գլուխը՝ «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների տարածաշրջանային և միջազգային հարթություններում» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական տարածաշրջանային ռազմաքաղաքական հավասարակշռման գործում» վերտառությամբ ենթագլխում ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում անդրադարձ է կատարվում հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգային դինամիկային, ուժային հավասարակշռության

հիմնախնդիրներին՝ վերհանելով դրանցում Հայաստանի գործոնայնության դերն ու նշանակությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Սիրիական, ուկրաինական ճգնաժամերը և դրանց ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա» ներկայացված են Մերձավոր Արևելքում և հետխորհրդային տարածքում սկիզբ առած աշխարհաքաղաքական գործընթացները, որոնք նշանակալիորեն անդրադարձան ռուս-թուրքական հարաբերությունների և դրանցում ձևավորված միաժամանակ և՛ հակամարտային, և՛ համագործակցային ձևաչափի վրա: Սիրիական և ուկրաինական ճգնաժամերում Ռուաստանի և Թուրքիայի ռազմաքաղաքական ներգրավվածությունը առանցքային դարձավ կողմերի ոչ միայն հակամարտահամագործակցային «բնականոն» հարաբերությունների ամրագրման ու մրցակցային պայմաններում նաև փոխադարձ շահերի սպասարկման ապահովման առումով, այլև էականորեն մոտեցրեց հարավկովկասյան և մերձավորարևելյան տարածաշրջանների միջև անվտանգային կապերը: Որպես կողմերի համար առանցքային տարածաշրջան՝ Հարավային Կովկասը ևս ենթարկվեց այդ գործընթացների ազդակներին:

Երրորդ ենթագլխում՝ «Թուրքիայի և Ռուսաստանի շահերն ու հակասությունները Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նոր իրողություններում. Հայաստանի գործոնայնության փոխակերպումը» ներկայացվում են աշխարհաքաղաքական նոր իրողությունների համապատկերում Ռուսաստանի և Թուրքիայի հակամարտահահամագործակցային հարաբերությունների հարավկովկասյան դրսևորումները, ռուս-թուրքական փոխգործակցության նոր «մոդուս-վիվենդին», դրանցում Հայաստանի գործոնայնության փոխակերպման միտումները:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական և առանցքային դրույթներն ու եզրահանգումները.

1. ԽՍՀՄ-ի փլուզմամբ Մոսկվայի դիրքերը թեև թուլացան, բայց 90-ական թթ. Թուրքիային չհաջողվեց հարավկովկասյան տարածաշրջանում ձեռք բերել գերակայող տերության կարգավիճակ: Ռուսական հեգեմոնիայի պահպանումը Հարավային Կովկասում օրակարգային հարց էր դարձել, ինչը մեծացրեց Հայաստանի գործոնայնությունը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում: Հայաստանը դարձավ Հարավային Կովկասում և Միջին Ասիայում Թուրքիայի աշխարհաքաղաքական հավակնությունները սահմանափակող և միևնույն ժամանակ Ռուսաստանի դերակատարության պահպանման ու ազդեցության վերականգնման ռազմավարական գործոն:

2. Ղարաբաղյան առաջին պատերազմը դարձավ նոր աշխարհաքաղաքական իրավիճակում Հարավային Կովկասում ռուս-թուրքական ուժային հավասարակշռման առանցքային գործոնն ու երկարատև ռազմաքաղաքական հակակշռման մեկնակետը: Հետագայում ղարաբաղյան հիմնախնդիրը դառնալու էր Հարավային Կովկասի անվտանգային ճարտարապետության ռուսական և թուրքական կողմերի միջև քննարկման առանցքային հարցերից մեկը: Հակամարտության սառեցմամբ՝ ՌԴ-ն կողմերի վրա երկարատև ազդեցության հնարավորություն ստացավ: Բացի դրանից, Ռուսաստանի շահերից բխում էր տարածաշրջանում կայունության հաստատումը, որն առաջին հերթին պայմանավորված էր Հյուսիսային Կովկասում ընթացող անջատամետ գործընթացներով: Թուրքիայի կողմից նաև Հյուսիսային Կովկասի հակառուսական ուժերին սատարելը ևս նպաստեց հակամարտության և դրա կողմերի նկատմամբ Մոսկվայի անվտանգակենտրոն զգայուն դիրքորոշման բյուրեղացմանը:
3. 21-րդ դարի առաջին տասնամյակում թեև ՌԴ-ն կարողանում էր սահմանափակել Թուրքիայի ազդեցությունը Հարավային Կովկասում, Թուրքիան փորձեց Ռուսաստանին որպես հակակշիռ օգտագործել Արևմուտքի հետ իր դիվանագիտական խուսավարումներում: Ռուս-թուրքական հարաբերություններն ունեցան զգալի վերելք, կողմերն ընդգծեցին իրենց աշխարհաքաղաքական առաջնահերթությունները և եվրասիական տարածաշրջան երրորդ ուժի ներթափանցման դեմ համատեղ պայքարի կարևորությունը: ՌԴ-ին հաջողվեց իրենից առևտրատնտեսական և էներգետիկ որոշակի կախվածության մեջ դնել Թուրքիային: Սակայն Ռուսաստանի հետ համագործակցության եղանակով Հարավային Կովկասում ամրանալու ուղղությամբ Թուրքիայի սպասելիքները չարդարացան: Վերջինս նաև չստացավ Մոսկվայի աջակցությունը ղարաբաղյան խնդիրն Ադրբեջանի օգտին լուծելու կապակցությամբ: Ուստի, 21-րդ դարի առաջին տասնամյակը նշանավորվեց Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի բազմաշերտ առավելությամբ: Սակայն, ռուս-թուրքական առևտրատնտեսական սերտ համագործակցությունը երկու երկրներին դրեց նաև քաղաքական փոխկախվածության մեջ, որտեղ կողմերը սկսեցին խուսափել հակամարտային ներուժ ունեցող գործընթացներում հնարավոր առճակատումներից՝ փնտրելով ընդհանուր շահերի համատեղմամբ «ռիսկերի կառավարման» ճկուն ուղեգիծ:

4. 2008 թ. օգոստոսյան պատերազմի արդյունքները նպաստեցին Ռուսաստանի ռազմաքաղաքական ամրապնդմանը Հարավային Կովկասում: Նրա գործողությունների հանդեպ Թուրքիայի զուսպ դիրքորոշումը 2000-ականների նրանց միջև հարաբերությունների ձևաչափին բնորոշ դրսևորումներից էր, այն է՝ տարածաշրջանում արևմտյան ազդեցության սահմանափակումը, ինչպես նաև Ռուսաստանի հետ համագործակցության եղանակով տարածաշրջանում թուրքական շահերի սպասարկումն ու դերակատարության ընդլայնումը: Հարավային Կովկասում Ռուսաստանի հետ համագործակցային ռազմավարական մտածողությունը Անկարան այդ շրջանում համարում էր հեռանկարային:
5. 2008 թ. պատերազմի ու դրա հետևանքների առանցքային ու գլխավոր նշանակությունը Անկարայի կողմից տարածաշրջանում Ռուսաստանի դերի ու շահերի վերահաստատումն էր այն պայմանով, որ Թուրքիան, որպես տարածաշրջանային ուժային կենտրոն, այսուհետ Ռուսաստանի հետ պատասխանատվություն ունի Հարավային Կովկասում գործընթացների ներազդման առումով և հավասարապես պետք է կիսի վերջինիս հետ տարածաշրջանը տնօրինելու հանձնառությունը: Այլ կերպ ասած՝ Անկարան առաջարկում էր տարածաշրջանը տնօրինելու երկուստեք շահավետ մեխանիզմի գործարկում, ինչը հետագայում դարձավ տարածաշրջանում թուրքական ռազմավարական ուղեգծի առանցքային բաղադրիչներից: Թուրքիայում գտնում էին, որ Ռուսաստանի հետ աշխատելն, այլ ոչ թե հակամարտությունը ավելի կխթանի Կովկասում թուրքական լծակների ուժեղացմանը: Անկարայի համար ակնհայտ դարձավ, որ տարածաշրջանում գերակա դերակատարը Ռուսաստանն է, ուստի տարածաշրջանային հիմնախնդիրներում իր շահերի սպասարկումը կարող է իրականացվել ռուսական կողմի հետ համագործակցային միջավայրում: Սա վերաբերում էր նաև դարաբաղյան հիմնախնդրին, քանի որ Անկարայի համար պարզ դարձավ, որ խնդրի լուծման «բանալին» Ռուսաստանի ձեռքում է, ուստի միայն «ընդհանուր օրակարգի» կայացմամբ հնարավոր կլինի Անկարայի տեսանկյունից խնդրի շահեկան կարգավորման ընթացքը:
6. Ռուսաստանը, թեև թուլացած, դարձավ հետխորհրդային տարածաշրջանի անվտանգության համալիրի հեգեմոն, ինչն էլ փորձեց վիճարկել Թուրքիան: Վերջինիս համար կարևոր էր տարածաշրջանում նոր ստատուս-քվոյի հաստատմամբ

Ռուսաստանի դիրքերի թուլացումը: Թուրքիան տարբեր եղանակներով շարունակեց ձևավորված ուժային հավասարակշռությունը խախտելուն ուղղված իր գործողությունները: Հետխորհրդային տարածքի հարավկովկասյան անվտանգային ենթահամալիրում Հայաստանը դարձավ Ռուսաստանի, իսկ Ադրբեջանը՝ Թուրքիայի տարածաշրջանային ռազմաքաղաքական շահերի ապահովման գործոնը: Թուրքիան դիմեց տարածաշրջանում Ռուսաստանի հետ առկա հավասարակշռության խախտմանը, ինչի ուղղությամբ նրա գործուն քայլերն արտահայտվեցին հատկապես 21-րդ դարի երկրորդ տասնամյակից: Սակայն ՀՀ-ում ռուսական ռազմաբազայի առկայությունը շարունակում էր հանդիսանալ Թուրքիայի զսպման կարևոր գործոնը, որն առավել կարևորվեց սիրիական պատերազմով: Այս համատեքստում, ռուս-թուրքական մրցակցությունը շարունակում էր արտահայտվել Մոսկվայի նկատմամբ Արևմուտքի պատժամիջոցների և լարված միջազգային իրադրության պայմաններում՝ առաջ բերելով հավելյալ ռիսկեր Հարավային Կովկասի անվտանգության համար:

7. Մերձավոր Արևելքում և հետխորհրդային տարածքում սկիզբ առած աշխարհաքաղաքական գործընթացները նշանակալիորեն անդրադարձան ռուս-թուրքական հարաբերությունների և դրանցում ձևավորված միաժամանակ և՛ հակամարտային, և՛ համագործակցային ձևաչափի վրա: Սիրիական և ուկրաինական ճգնաժամերում Ռուաստանի և Թուրքիայի ռազմական ու քաղաքական ակտիվ ներգրավվածությունը առանցքային դարձավ ոչ միայն երկու տերությունների միաժամանակյա հակամարտահամագործակցային «բնականոն» հարաբերությունների ամրագրման ու մրցակցային պայմաններում նաև փոխադարձ շահերի սպասարկման ապահովման առումով, այլև էականորեն մոտեցրեց Հարավային Կովկասի ու մերձավորարևելյան տարածաշրջանի միջև անվտանգային կապերը: Ռուս-թուրքական հարաբերությունների նույնիսկ կարճատև վատթարացումն անդրադարձավ Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա: Իսկ 2015 թ. նոյեմբերին գրանցված ռուս-թուրքական լարվածությունից անմասն չմնացին նաև ԼՂՀ-ն և Հայաստանը:

8. Սիրիական և ուկրաիանական զարգացումները առանցքային են այն տեսանկյունից, որ փաստորեն դրանք ամրագրեցին ճգնաժամային իրավիճակներում ռուս-թուրքական հակամարտահամագործակցային ձևաչափի կենսունակությունը, երբ

կողմերը կարողացան համատեղել և՛ համագործակցային, և՛ հակամարտային ձևաչափերը երկկողմ հարաբերություններում։ Բացի այդ, սիրիական ռազմաքաղաքական գործընթացներում Թուրքիայի և Ռուսաստանի ակտիվ մասնակցությունը մարտահրավեր էր նետել երկու երկրների արդեն իսկ կուտակած բազմաոլորտ համագործակցային կապիտալի կենսունակության համար, ինչը ստիպեց կողմերին գտնելու փոխադարձ շահերի հաշվարկմամբ ընդունելի համատեղ լուծումների գնալու հնարավորություններ։ Մերձավոր Արևելքում մրցակցային և հակամարտային հարաբերություններում լուծումներ գտնելու երկկողմ փորձը հետագայում էական էր դառնալու նաև այլ տարածաշրջաններում դրանց կիրարկման տեսանկյունից։

9. Արևմուտքի հետ դիմակայության պայմաններում Ռուսաստանի համար գնալով մեծանում էր թե՛ Ադրբեջանի, և թե՛ հատկապես Թուրքիայի բազմաբաղադրիչ գործոնայնությունը՝ ի հաշիվ Հայաստանի, ինչը տարածաշրջանում կոշտ հավասարակշռման վրա ունենալու էր իր ազդեցությունը, այդ թվում նաև՝ Հայաստանի տարածաշրջանային ռազմաքաղաքական դերակատարության առումով։ Միջազգային համակարգի ու միավորային գործոններով պայմանավորված Հայաստանի գործոնայնության թուլացումն իր դաշնակցի մոտ ի հայտ բերեց ռազմական անվտանգության նոր սպառնալիքներ։ Մոսկվայի նկատմամբ Արևմուտքի քաղաքական և տնտեսական պատժամիջոցների ֆոնին Թուրքիան և Ադրբեջանն ամրապնդեցին իրենց գործոնայնությունը Ռուսաստանի հետ հարաբերություններում։ Հայաստանը երկար ժամանակ ռազմավարական նշանակություն է ունեցել տարածաշրջանում ուժային հավասարակշռման տեսանկյունից՝ հնարավորություն տալով Ռուսաստանին ապահովել իր ռազմաքաղաքական հեգեմոն դերը Հարավային Կովկասում։ Սակայն Ադրբեջանը այսպես ասած «չկորցնելու» քաղաքական մտածողությամբ պայմանավորված ռազմաքաղաքական համագործակցության զարգացումը, տարածաշրջան շարունակական ներթափանցման հարցում Թուրքիայի հետ էներգետիկ-տնտեսական շահերով պայմանավորված ռուսական կողմի «աչք փակելը» և թուրք-ադրբեջանական ռազմավարական համագործակցությունը ոչ միայն անվտանգային սպառնալիք առաջացրին Հայաստանի համար, այլ երկարաժամկետ առումով սասանում են ռուսական ազդեցությունը տարածաշրջանում։ Տարածաշրջանում իր միակ ռազմավարական դաշնակից Հայաստանի և Թուրքիայի ռազմավարական դաշնակից

Ադրբեջանի հետ «պրագմատիկ հավասարակշռման» ռուսական քաղաքականությունը ժամանակի ընթացքում Ադրբեջանի համար ապահովեց բազմավեկտորության ռազմավարության քողի տակ Թուրքիայի հետ ռազմաքաղաքական սերտ դաշնակցության զարգացումը:

10. Թուրքիայի ագրեսիվ արտաքին ու տարածաշրջանային քաղաքականությունը 2020 թ. տարածաշրջանում ստատուս քվոյի կտրուկ փոփոխության հնարավորություն տվեցին Ադրբեջանին: Այս համատեքստում, Ռուսաստանի համար երկարաժամկետ առումով էական խնդիր է դառնում Հարավային Կովկասում թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի զսպումը, որի աշխարհաքաղաքական ազդեցությունը նաև Կենտրոնական Ասիա տարածվելու նոր հնարավորություններ է բացում: 2020 թ. պատերազմի արդյունքում տարածաշրջանում Թուրքիան ռազմաքաղաքական ազդեցության որակական նոր մակարդակի հասավ, ինչը երկարաժամկետ կտրվածքով մեծացնում է Հայաստանի համար սպառնալիքները և Ռուսաստանի աշխարհաքաղաքական խոցելիությունը:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները

1. Սաքոյան Տ. Ա., Պանթյուրքիզմը որպես եվրասիական ժողովուրդների աշխարհաքաղաքական մարտահրավեր // «21-րդ ԴԱՐ», № 1 (71), «Նորավանք» ԳԿՀ, Եր., 2017, էջ 75-84:
2. Սաքոյան Տ. Ա., Ռուս-թուրքական հարաբերությունները և Հայաստանը // «21-րդ ԴԱՐ», № 5 (75), «Նորավանք» ԳԿՀ, Եր., 2017, էջ 92-102:
3. Սաքոյան Տ. Ա., Սիրիական և ուկրաինական ճգնաժամերը Ռուսաստանի և Թուրքիայի շահերի տեսանկյունից // «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, 2017, 2 (47), էջ 296-299:
4. Սաքոյան Տ. Ա., Հայկական գործոնը ռուս-թուրքական հարաբերություններում. պատմական ակնարկ // «21-րդ ԴԱՐ», № 3 (79), «Նորավանք» ԳԿՀ, Եր., 2018, էջ 49-58:
5. Սաքոյան Տ. Ա., 2008 թվականի օգոստոսյան պատերազմի ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա // «Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019, № 3 (30), էջ 20-27:

6. Սաքոյան Տ. Ա., Թուրքիայի և Ռուսաստանի շահերն ու հակասությունները Հարավային Կովասի աշխարհաքաղաքական նոր իրողություններում (2010-2016) // «Պատմություն և մշակույթ», № 2, Եր., 2021, էջ 127-136:

ТАРОН АРАМОВИЧ САКОЯН

ФАКТОР АРМЕНИИ В КОНТЕКСТЕ РОССИЙСКО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ В 1991-2015 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история». Защита состоится 28-го декабря 2022 г., в. 14:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Кандидатская диссертация посвящена в исследуемый период роли и значению фактора Армении в российско-турецких отношениях, к трансформации этого фактора в контексте динамики отношений двух держав. Диссертация имеет прикладную политологическую и пракическую значимость, положения и выводы которой могут быть полезны историкам, политологам, востоковедам, специалистам, занимающимся проблемами российско-турецких отношений, может быть использована в качестве учебного материала в военно-учебных заведениях и спецкурсах.

Цель работы – выявить роль и значение фактора Армении в российско-турецких отношениях, в связи с чем были сфомулированы следующие исследовательские задачи:

-Показать процесс проявление поворотных этапов фактора Армении в российско-турецких отношениях.

-Показать характер постсоветского развития российско-турецких отношений и роли в нем фактора Армении.

-Придать анализу действия России, направленные на сохранение своей гегемонии на Южном Кавказе, инициативы Турции, направленные на укрепление собственных позиций, развития региональных военно-политических вопросов, затрагивающих их интересы и значение в них фактора Армении.

-В контескте российско-турецких отношений поднять роль фактора Армении в системе региональной безопасности и военно-политического баланса.

-В контескте сирийских и украинских событий показать изменения в российско-турецких отношениях и оценить их влияние на динамику безопасности Армении и Южного Кавказа.

Работа состоит из введения, трех глав, восьми параграфов, заключения, списка использованных источников и литературы. Во введении говорится об актуальности, целях и задачах темы, представлены ее методологическая основа и научная навизна, а также хронологические рамки. Обоснована прикладное значение работы и дана теория использованных источников и литературы.

В первой - **«Российско-турецкие отношения в 1990-е гг. Начало балансирования в условиях взаимного недоверия и противоречий»** главе представлены амбиции Турции в отношении региона, их форматные трансформации и значение Армении на фоне ослабления позиции России на Южном Кавказе в связи с распадом СССР, а также значение карабахской войны для России и Турции.

Во второй - **«Фактор Армении в трансформации тенденций развития российско-турецких отношений»** главе представлены многослойное развитие российско-турецких отношений в 2000-е гг., основные определяющие их факторы, благодаря которым сотрудничество между этими сторонами было поднято на уровень стратегического партнерства с гибким сочетанием конкуренции и сотрудничества. В контескste российско-турецких отношений были проанализированы последствия российско-грузинской войны 2008 года, а также мотивы и ожидания России и Турции в вопросе урегулирования армяно-турецких отношений.

В третьей - **«Фактор Армении в региональных и международных измерениях российско-турецких отношений»** главе в контексте российско-турецких отношений расматриваются вопросы динамики безопасности и силавого баланса на южнокавказском регионе, поднимая в них роль и значение фактора Армении. Проанализированы южнокавказские проявления соперничественно-сотрудничественных отношений России и Турции, новый «модус вивенди» российско-турецких отношений и тенденции к трансформации фактора Армении.

TARON A. SAKOYAN

THE FACTOR OF ARMENIA IN THE CONTEXT OF RUSSIAN-TURKISH RELATIONS IN 1991-2015

The dissertation is submitted for the scientific degree of the Doctor of Philosophy in the specialty 07.00.02-"World History". The defense of the dissertation will take place on December 28, 2022, at 14:00, at the meeting of the specialized council 006 "World History", at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Address: 0019, Yerevan, 24/4 Marshal Baghramyan Ave.

SUMMARY

The present dissertation is devoted not only to the role and significance of the Armenian factor in Russian-Turkish relations during the period studied, but also to the transformations of this factor in the context of the relationship dynamics between these two countries. The dissertation is of great importance in the sphere of an applied political science, the provisions and conclusions of which can be useful for historians, political scientists, orientalists, specialists dealing with the problems of Russian-Turkish relations. Moreover, it can be used as instructional material in military educational institutions and special courses.

The aim of the research is to highlight the role and significance of the factor of Armenia in the Russian-Turkish relations. To achieve the mentioned goal the following research questions have been set forth:

- to show the phases of manifestation of the Armenian factor in Russian-Turkish relations,
- to present the nature of post-Soviet developments in Russia-Turkey relations and the role of the Armenian factor in it,
- to analyze Russia's actions aimed at maintaining its hegemony in the South Caucasus, Turkey's initiatives aimed at strengthening its own positions, regional military-political developments affecting their interests and the significance of the Armenian factor in them,
- to highlight the role of the Armenian factor in the regional security order and military-political balance in the context of Russian-Turkish relations,
- to present the registered changes in Russian-Turkish relations in the context of Syrian and Ukrainian crises and evaluate their impact on the security dynamics of Armenia and the South Caucasus.

The work consists of an introduction, three chapters, eight subchapters, a conclusion and a list of references and literature. The introduction touches upon the topicality, goals and problems of the research, presents the methodological basis and scientific novelty, the chronological frame of the work. The practical significance of the research is justified, and the theory of used sources and literature is given.

In the first chapter entitled **"Russian-Turkish relations in the 1990s. The beginning of balancing in the context of mutual mistrust and contradictions"** at the background of the weakening of Russia's positions in the South Caucasus due to the collapse of the USSR Turkey's ambitions towards the region, their transformations, the beginning of balancing and the importance of Armenia's factor as well as the significance of the Karabakh war for Russia and Turkey are presented.

In the second chapter entitled **"The factor of Armenia in the changing trends of the development of Russian-Turkish relations"** presents not only the multi-layered development of Russian-Turkish relations in the 2000s but also the main factors determining them, by which the cooperation was raised to the level of strategic partnership with a flexible combination of competition and cooperation. The consequences of the Russian-Georgian war in 2008, in the context of Russian-Turkish relations, as well as the motives and expectations of Russia and Turkey regarding the settlement of Armenian-Turkish relations, are analyzed.

In the third chapter entitled **"The Armenian factor in the regional and international dimensions of Russian-Turkish relations"** the security dynamics in the South Caucasus region, the issues of power balance, highlighting the role and significance of Armenia's factor are illustrated in the context of Russian-Turkish relations. The South Caucasian manifestations of Russian-Turkish "co-opetition", the new modus vivendi of Russian-Turkish cooperation and the trends of transformation of Armenia's factor in them are analyzed.